



Ութ տարի առաջ Եվրոպայի Խորհուրդն ընդունել է *Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան*, որը նաև հայտնի է Ստամբուլյան Կոնվենցիա անվանմամբ: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Կոնվենցիան 2018 թվականին, սակայն դեռևս չի վավերացրել այն: Որպես պետական ոլորտի և հանրային ծառայությունների 13 000 աշխատողներ միավորող արհմիություն՝ մենք ցանկանում ենք առաջընթաց այս հարցում, և հետևաբար կոչ ենք անում վավերացնել Կոնվենցիան:

Նոյեմբերի 25-ին ընդառաջ, որն այս տարի արդեն 19-րդ անգամ նշվում է որպես *Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման միջազգային օր*, կոչ ենք անում Ազգային Ժողովին վավերացնել Կոնվենցիան՝ պաշտպանելու և աջակցելու մեր հանրության կանանց: Ստամբուլյան կոնվենցիան իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագիր է, որի նպատակն է պայքարել կանանց նկատմամբ բոլոր տիպի հալածանքների, բռնության և ոտնձգությունների դեմ՝ հիմնական շեշտը դնելով կանխարգելման վրա, ինչպես նաև աջակցել զոհերին և պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Կոնվենցիան հաշվի է առնում, որ կանանց նկատմամբ բռնությանը իր կառուցվածքային էության գենդերային հիմք ունի, և այն ամեն օր խափանում է բազմաթիվ կանանց և աղջիկների հասանելիությունը դեպի ծառայություններ, աշխատանք, հանրային կյանք և դուրս է շարտում նրանց դեպի ենթարկվող դերեր:

Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու դեպքում այն ևս մեկ քայլ կլինի դեպի գեղներային հավասարություն. այն շեշտում է ինֆորմացիայի և իրազեկման արշավների կարևորությունը, աջակցում է թրեյնինգներին և կրթությանը՝ որպես կանանց առաջխաղացման կարևոր գործիքների:

Երկրում, որտեղ ընտանեկան բռնությունը դեռ լայն տարածում ունի և այդ խնդիրը թերագնահատված է, ինչպես նաև երկրում, որտեղ կանայք ոչ պատշաճ ներգրավվածություն ունեն հանրային որոշումների կայացնելու դաշտում (Ազգային Ժողովի միայն պատգամավորների միայն 22,7 է կին), օրենքը պարտավոր է միջամտել՝ երաշխավորելու կանանց անվտանգության, հավասարության և ադեկվատ ծառայություններ ստանալու իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը արդեն ցույց է տվել գեղներային հավասարության նորմերին իր հավատարմությունը՝ ստորագրելով Կոնվենցիան, ինչպես նաև 2017թ. ընդունելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը: Այսօր, կոչ ենք անում վերահաստատել Ձեր պատրաստակամությունը՝ առաջ շարժվելու այս գործընթացում, չտրվել տարբեր կասկածելի խմբերի սանդրանքներին և վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան: